

Հաստատված է՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ»

ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի

« 06 » ապրիլի 2012 թ. նիստում

Խորհրդի նախագահ՝ _____ Վ. Գրիգորյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԳՅՈՒՄՐՈՒ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ, ՀԵՌԱՑՄԱՆ (ԱԶԱՏՄԱՆ) ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1.1 Սույն կանոնակարգով սահմանվում են Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտում (այսուհետ՝ ԳՊՄԻ) ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգման ընդհանուր պայմանները՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության և գիտության նախարարության համապատասխան կարգը (թիվ 1242, 17 նոյեմբեր 2011թ.)
- 1.2 Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են գիտական խորհրդի որոշումներով:
- 1.3 Ուսանողների ուսումնառության ընդհատումը, հեռացումը (ազատումը) և վերականգնումը որոշվում է սույն կանոնակարգով և գործածության մեջ է դրվում ռեկտորի հրամանով:
- 1.4 Ուսումնական պլանների փոփոխության պատճառով առաջացած առարկայական տարբերությունները համարվում են ակադեմիական պարտքեր:
- 1.5 Առարկայական տարբերություն է համարվում ուսումնական պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 25 /քսանհինգ/ տոկոս և ավելի կրեդիտների տարբերությունը:
- 1.6 Ակադեմիական անբավարար առաջադիմություն է համարվում քննաշրջանում երեք և ավելի առարկաներից կամ մեկ առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստանալը:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄ

2.1 Ուսանողը **հեռացվում է** բուհից.

2.1.1 ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով անհրաժեշտ գումարային կրեդիտներ չհավաքելու դեպքում (բացառությամբ սույն կանոնակարգի 2.2 կետի),

2.1.2 բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքում,

2.1.3 բուհի կողմից սահմանված ժամկետում վարձը չվճարելու դեպքում:

2.2. Ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերած այն ուսանողները՝ բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, որոնց ակադեմիական պարտքը կազմում է առավելագույնը 12 /տասներկու/ կրեդիտ, իրավունք ունեն մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լուծարելու տեղափոխվող ակադեմիական պարտքը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 /երկու/ անգամ:

2.3. Սույն կարգի 2.1.1 կետով նախատեսված դեպքում բուհից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

2.4. Բուհից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:

2.5. Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքով ընդունված, սակայն բուհից հեռացված ուսանողները զրկվում են տարկետման իրավունքից:

2.6. Ուսանողի դիմումի համաձայն Բուհից հեռացման (ազատման) դեպքում 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի կրկնօրինակը, ակադեմիական տեղեկանքը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, որի կրկնօրինակը պահվում է ուսանողի գործում:

2.7. Ուսանողը **ազատվում է** բուհից՝

2.7.1. իր դիմումի համաձայն,

2.7.2. այլ բուհ տեղափոխվելու դեպքում,

2.8. ուսանողը չի կարող ազատվել բուհից իր դիմումի համաձայն, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն կանոնակարգի 2.1 կետով նախատեսված դեպքերի:

2.9. Ուսանողի ուսումնառությունն **ընդհատվում է՝**

2.9.1. ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

2.9.2. առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու դեպքում,

2.9.3. հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 /երեք/ տարեկան երեխայի խնամքի դեպքում:

2.10. 2.9 կետի համաձայն ուսումնառությունն ընդհատած ուսանողները շարունակում են պահպանել մինչև ընդհատումն ունեցած իրենց կարգավիճակը:

3. ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄ

- 3.1. Տեղափոխվող ակադեմիական պարտքերը լուծարելու համար ԳՊՄԻ-ի գիտական խորհուրդը հաստատում է հետևյալ կարգը.
- 3.1.1. եթե ուսանողը ըստ գնահատման բազմագործոնային համակարգի տվյալ առարկայի վերջնական գնահատականը 30 /երեսուն/ միավորից պակաս, ապա նա պարտավոր է հաճախել այդ առարկայից կազմակերպվող լրացուցիչ դասընթացներին՝ վճարելով ըստ ուսումնական պլանով նախատեսված կրեդիտի (մեկ կրեդիտի գումարային արժեքը կազմում է տվյալ ուստարում տվյալ մասնագիտության համար սահմանված վարձավճարի 1/60 /մեկ վաթսուներորդ/ մասը),
- 3.1.2. 30 /երեսուն/ և ավելի միավորի դեպքում ուսանողն ազատվում է լրացուցիչ դասընթացներից և ակադեմիական պարտքը հանձնում առարկայական հանձնաժողովին մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը,
- 3.1.3. տվյալ առարկայից ակադեմիական պարտքի լուծարման համար ուսանողին տրվում է 2 /երկու/ հնարավորություն,
- 3.1.4. ուսանողը պետք է գրանցվի տվյալ առարկայից կազմակերպվող ուսումնական պարապմունքներին մասնակցելու համար՝ ըստ նախատեսված կարգի (կարգը կցվում է),
- 3.1.5. ուսանողի ակադեմիական պարտքն ընդունում է բուհի ռեկտորի հրամանով ձևավորված տվյալ ամբիոնի քննական հանձնաժողովը (բաղկացած 3 /երեք/ անդամից՝ ամբիոնի վարիչը և 2 /երկու/ դասախոս, որոնցից մեկը դասընթացը վարող դասախոսն է),
- 3.1.6. ուսանողը քննության վերահանձմանը ներկայանում է ֆակուլտետի դեկանի կողմից տրված ուղեգրով,
- 3.1.7. ուսանողի վերահանձնած քննության վերջնական արդյունքը հաշվարկվում է տվյալ առարկայից ուսանողի կուտակած միավորին գումարելով ստացած նոր միավորի համապատասխան կշիռը,
- 3.1.8. վերահանձնվող քննությունն անցկացվում է գրավոր կամ բանավոր:
- 3.2. Ֆիզդաստիարակություն առարկայից ակադեմիական պարտքի դեպքում ուսանողին թույլ է տրվում մասնակցել լրացուցիչ դասընթացին՝ վճարելով ինստիտուտի ռեկտորատի կողմից սահմանված գումարը:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

- 4.1. Բուհի ռեկտորը վերականգնվող ուսանողին ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է՝ ըստ տվյալ բուհում տվյալ մասնագիտության համար սահմանված մեկ կրեդիտի արժեքի:
- 4.2. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:

- 4.3. Ուսանողական իրավունքների վերականգման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 /երկու/ շաբաթվա ընթացքում, իսկ հեռակա համակարգում՝ կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող 3 /երեք/ շաբաթվա ընթացքում: Վերականգման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:
- 4.4. Բուհից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են բուհի ռեկտորի հրամանով:
- 4.5. Բուհի ուսումնական մասը ռեկտորի հրամանով քննարկում է ուսանողի վերականգման դիմումը, որոշում նրա հետագա ուսումնառության կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին որոշումը:
- 4.6. Բուհի ռեկտորը տալիս է կցագրման հրաման համապատասխան կուրսում ուսումնառությունը շարունակելու և առաջացած առարկայական տարբերությունների և ավարտական պարտքերի լուծման համար սահմանում ժամկետ (մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը):
- 4.7. Առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի հանձնումից հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:
- 4.8. Զորակոչվելու կապակցությամբ կամ առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսումնառությունը շարունակում է այն պահից, որից այն ընդհատվել է՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:
- 4.9. Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո:
- 4.10. Բուհից հեռացված (ազատված) ուսանողը վերականգնվում է այն կիսամյակում, որից նա հեռացվել (ազատվել) է, եթե վերականգման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված կրեդիտների գումարային քանակը չի գերազանցում 20 /քսան/ կրեդիտը:
20 /քսան/ կրեդիտը գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել այն կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պայմանը բավարարվում է՝ բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:
- 4.11. Բուհից հեռացված (ազատված) ուսանողը վերականգնվում է տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից հատկացված տեղերի սահմաններում:
- 4.12. Բուհից հեռացված (ազատված) ուսանողը վերականգնվում է միայն վճարովի սկզբունքով: Վճարովի սկզբունքով վերականգնված ուսանողը կարող է ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատեղման գործընթացին՝ առնվազն մեկ ուսումնական տարի ուսանելուց հետո:
- 4.13. Բուհից հեռացված (ազատված) ուսանողը կարող է վերականգնել ուսանողական իրավունքները պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված

կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում:

- 4.14. Ըստ մասնագիտությունների չհավատարմագրված բուհերից հեռացված (ազատված) ուսանողների վերականգնումն ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող բուհերում չի թույլատրվում:
- 4.15. Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգման մասին հրամանի պատճենը, բուհի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական վկայականը, ուսման վարձի վճարման անդորրագիրը:
- 4.16. Անվճար սկզբունքով ուսումը կարող են շարունակել ՀՀ օրենքով սահմանված իրավունքներից օգտվող անձինք:

ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳ

Առաջին կիսամյակի քննաշրջանն ավարտվելուց հետո ուսանողը կարող է մինչև մարտի 25-ը վճարել այդ առարկայի լրացուցիչ ուսումնական պարապմունքի համար և անդորրագրի առկայության դեպքում գրանցվել կազմակերպվող լրացուցիչ պարապմունքին: Լրացուցիչ դասընթացները կազմակերպվում են ապրիլի 1-ից, 16 ժամ տևողությամբ, այնպես, որ չհամընկնեն տվյալ ուսանողի հիմնական ծանրաբեռնվածության գրաֆիկի հետ: Ըստ դեկանի կողմից հաստատված գրաֆիկի՝ մինչև մայիսի 20-ը, ուսանողը կարող է ակադեմիական պարտքը հանձնել համապատասխան ամբիոնի քննող հանձնաժողովին: Անբավարար գնահատականի դեպքում մինչև գարնանային քննաշրջանի պարտքերի լուծարման շրջանի ավարտը ուսանողը կարող է օգտագործել երկրորդ հնարավորությունը: Հակառակ դեպքում ակադեմիական պարտքը կարող է տեղափոխվել հաջորդ կիսամյակ, եթե ընդհանուր տեղափոխվող ակադեմիական պարտքերի գումարը 12 կրեդիտից ավելի չէ:

Երկրորդ կիսամյակի քննաշրջանն ավարտվելուց հետո ուսանողը կարող է մինչև հոկտեմբերի 25-ը վճարել այդ առարկայի լրացուցիչ ուսումնական պարապմունքի համար և անդորրագրի առկայության դեպքում գրանցվել կազմակերպվող լրացուցիչ պարապմունքին: Լրացուցիչ դասընթացները կազմակերպվում են նոյեմբերի 1-ից, 16 ժամ տևողությամբ, այնպես, որ չհամընկնեն տվյալ ուսանողի հիմնական ծանրաբեռնվածության գրաֆիկի հետ: Ըստ դեկանի կողմից հաստատված գրաֆիկի՝ մինչև դեկտեմբերի 20-ը, ուսանողը կարող է ակադեմիական պարտքը հանձնել համապատասխան ամբիոնի քննող հանձնաժողովին: Անբավարար գնահատականի դեպքում մինչև ձմեռային քննաշրջանի պարտքերի լուծարման շրջանի ավարտը ուսանողը կարող է օգտագործել երկրորդ հնարավորությունը: Հակառակ դեպքում ակադեմիական պարտքը կարող է տեղափոխվել հաջորդ կիսամյակ, եթե ընդհանուր տեղափոխվող ակադեմիական պարտքերի գումարը 12 կրեդիտից ավելի չէ:

Լրացուցիչ դասընթացի համար վճարվող գումար

Ուսանողի Անուն, ազգանուն, հայրանուն	Մասնագիտությունը	Մասնագիտության մեկ կրեդիտի արժեքը	Առարկայի անվանումը	Կրեդիտը	Վճարվող գումարը

Տակուլտետի ղեկան _____

Ստորագրություն

/ _____ /

Անուն, ազգանուն

« _____ » « _____ » 2012թ.